ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԳԻՒՏ

Մի ճարպիկ ամերիկացի, շահագործելով հասարակութեան սէրը դէպի արկածալից վէպերի ընթերցանութիւնը, տղամարդու մի նոր տեսակ շապիկ հնարեց, որ մի օձիքը բաղկացած է եօթ առանձին թղթէ թերթերից։ Այս թերթի ետևի երեսին վէպ է տպած, իսկ առջևի կողմը ծառայում է ինչպէս շապիքի օձիք։ Շապիկները թուահամարած են, այնպէս որ իւրաքանչիւր ընթերցող գիտէ, թէ ինչպէս պէտք է գտնի իրան հարկաւոր վէպի շարունակութիւնը։ Բացի սրանից, հնարողը իր տպած նիւթերը այնպէս է դասաւորել, որ ամեն մարդ, ով երկու շապիկ է գնում, ունենում է արդէն մի ամբողջ վէպ։ Այս գիւտի օգուտը կայանում է նրանում, որ այդպիսի շապիկ ունեցողը կարող է ունենալ մաքուր օձիք եօթն օր շարունակ և ամեն օր մի մի թերթ բաց անելով և՝ իր տրամադրութեան տակ դրաւիչ ընթերցանութիւն մի ամբողջ շաբաթ, որովհետև այս շապկի հնարողը գրաւել է իր օձիքների համար այս կողմից քիչ շատ տաղանդաւոր գրողներին ու գրագէտներին և վճարում է նրանց ամենաբարձր վարձատրութիւն, միայն թէ վէպերը կարդացուին յափշտակիչ ոգևորութեամբ։ Այս շապկի հնարողը հաշուում է ի հարկէ այն, որ շատերը, ընթերցանութեամբ յափշտակուած օրը մի քանի թերթ կպոկեն իրանց օձիքից և շապիկը շուտ շուտ կփոխեն, ցանկանալով շուտ կարդալ հետաքրքրական վէպը։ Այսպիսով, հետաքրքրական վէպերը բաղմաթիւ բանուորներին միևնոյն ժամանակ կսովորցնեն մաքրութիւն և սպիտակեղէնի շուտ շուտ փոխելուն։

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կտեսնի

ԵՂԻՇԷԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Աշխարհաբար նոր թարգմանութիւն

ԳԻՒՏ ԱՂԱՆԵԱՆՑ Ա. Պ.